ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2024թ. **N ---- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ «ԵՐԵՎԱՆԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈՒԼ 2» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2023թ. նոյեմբերի 29-ին ստորագրված «Երևանի էներգաարդյունավետություն փուլ 2» ծրագրի իրականացման համաձայնագիրը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2023 թվականի նոյեմբերի 29-ին կնքված «Երևանի էներգաարդյունավետություն փուլ 2» ծրագրի իրականացման համաձայնագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ «ԵՐԵՎԱՆԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈՒԼ 2» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2023 թվականի նոյեմբերի 29-ին ստորագրվել է «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ փուլ» ֆինանսական պայմանագիրը՝ 25 մլն եվրո արժողությամբ, որն իրականացվելու է Եվրոպական հանձնաժողովի «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխում. 2020 թվականից հետո Արևելյան գործընկերության (ԱլԳ) առաջնահերթությունների» համատեքստում՝ Հայաստանի համար Եվրոպական միության տնտեսական և ներդրումային պլանի 5-րդ՝ «Ներդրումներ Երևանում. խելացի և կանաչ Երևան» ուղենիշի ներքո:

Ծրագրի փուլ 2-ը միտված է աջակցել Երևան համայնքի կողմից ընտրված համայնքային շինությունների էներգաարդյունավետության կայուն բարելավմանը, սեյսմիկ ամրացմանը և վերակառուցմանը: Եվրոպական ներդրումային բանկի կողմից գնահատված ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 37.1 մլն եվրո: Հայաստանի Հանրապետությունը մտադիր է ֆինանսավորել ծրագիրը հետևյալ աղբյուրներից՝

- Երևանի քաղաքապետարան՝ 2 մլն եվրո,
- Բանկի կողմից տրամադրվող վարկ՝ 25 մլն եվրո,
- «Հարևանության ներդրումային հարթակ»-ի կողմից տրամադրվող ներդրումային դրամաշնորհ՝ 10.1 մլն եվրո:

Հիմնվելով Երևան քաղաքի առաջնահերթությունների և նախնական ուսումնասիրության վրա, Երևանի քաղաքապետարանը ընտրել է համապատասխան հանրային շինություններ, որոնք բաղկացած են թվով 6 պոլիկլինիկաներից և թվով 32 մանկապարտեզներից: Նախապես ընտված թվով 38 հանրային շինություններում նախատեսվում է իրականացնել սեյսմիկ ամրացման, էներգաարդյունավետության բարելավման, վերակառուցման և կառուցման աշխատանքներ:

Ծրագրի շրջանակներում աշխատանքների իրականացումը և շինությունների շահագործման հանձնումը պետք է լինի վարկային համաձայնագրի ստորագրումից հետո 4 տարվա ընթացքում: Վարկի մասհանումների ժամկետը՝ վարկային համաձայնագրի ստորագրումից հետո կազմում է 3 տարի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Պայմանագրի համար (FI N°) 90.016
Գործառնական համար (Serapis N°) 2018-0581
ԵՆԲ ներքին դասակարգման մակարդակ՝ Կորպորատիվ օգտագործում

ԵՐԵՎԱՆԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ II

Ծրագրի իրականացման համաձայնագիր

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ

և

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ

միջև

Լյուքսեմբուրգ, 2023 թվականի նոյեմբերի 29

Երևան, 2023 թվականի նոյեմբերի 29

ՀՈԴՎԱԾ 1 ..... **6**
ՀՈԴՎԱԾ 2 ..... **6**
2.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 6
2.2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .. 7
2.3 ՎԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ 7
ՀՈԴՎԱԾ 3 ..... **7**
3.1 ԳՆՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ 7
ՀՈԴՎԱԾ 4 ..... **7**
4.1 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 7
4.2 ԾՐԱԳՐԻ ԱԿՏԻՎՆԵՐ 7
4.3 ՆՊԱՏԱԿ 8
4.4 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8
4.5 ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 8
4.6 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ 8
4.7 ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՒՄԲ 9
4.8 ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9
ՀՈԴՎԱԾ 5 ..... **9**
5.1 ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐ ՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9
5.2 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ 10
ՀՈԴՎԱԾ 6 ..... **10**
6.1 ԱՐԳԵԼՎԱԾ ՎԱՐՔԱԳԻԾ 10
6.2 ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ 10
6.3 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՆՁԻՆՔ 11
6.4 ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ 11
6.5 ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 11
ՀՈԴՎԱԾ 7 ..... **12**
7.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄՆԵՐ 12
ՀՈԴՎԱԾ 8 ..... **14**
8.1 ԾՐԱԳՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 14
8.2 ՆԱԽԱՁԵՌՆՈՂԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 15
8.3 ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄՈՒՏՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ և ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 16
ՀՈԴՎԱԾ 9 ..... **17**
9.1 ՀԱՐԿԵՐ, ՏՈՒՐՔԵՐ և ՎՃԱՐՆԵՐ 17
9.2 ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ 17

9.3 ՊԱՀՈՒՄՆԵՐ 17
ՀՈԴՎԱԾ 10 18
10.1. ԱՆՀԱՄԱՊԱՏԱԽԱՆՈՒԹՅՈՒՆ 18
10.2. ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ 18
ՀՈԴՎԱԾ 11 18
11.1 ՂԵԿԱՎԱՐՈՂ ՕՐԵՆՔ 18
11.2 ԻՐԱՎԱՋՈՐՈՒԹՅՈՒՆ 18
ՀՈԴՎԱԾ 12 19
12.1 ԾԱՆՈՒՑՄԱՆ ՁԵՎ 19
12.2 ՀԱՍՑԵՆԵՐ 20
12.3 ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄ ... 20
ՀՈԴՎԱԾ 13 20
13.1 ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 20
13.2 ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄ 20
13.3 ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆ 21
13.4 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ 21
13.5 ԿՐԿՆՕՐԻՆԱԿՆԵՐ 21
13.6 ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ 21
13.7 ԿՈՂՄԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 21
13.8 ԴԵԿԼԱՐԱՏԻՎ ԴՐՈՒՅԹՆԵՐ, ԱՌԴԻՐՆԵՐ և ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 22
ԱՌԴԻՐ Ա 23
ԾՐԱԳՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ և ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 23

ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿՆՔՎԵԼ Է

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ, որի նստավայրը գտնվում է Լյուքսեմբուրգ Լ-2950, Լյուքսեմբուրգ, Կոնրադ Ադենաուեր Բուլվար 98-100 հասցեում, ի դեմս Վարչության տնօրեն Լիոնել Ռապելի և Իրավական խորհրդատու Վիկտոր Դոմինիակի, (այսուհետև՝ "**Բանկ**")

մի կողմից և

Երևանի քաղաքապետարանի, որի հասցեն է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0015, Արգիշտի 1, ի դեմս Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի, (այսուհետև՝ "**Նախաձեռնող**")

միջև

մյուս կողմից, և երկուսն իրար հետ հանդես են գալիս որպես "**Կողմեր**", իսկ յուրաքանչյուրն առանձին՝ "**Կողմ**":

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈ Վ, ՈՐ

(a) Հայաստանի Հանրապետությունը ("**Վարկառու**") առաջարկել է ստանձնել գործառնություններ (յուրաքանչյուրը "**Ենթածրագիր**", իսկ միասին "**Ծրագիր**")՝ աջակցելու Երևանի ընտրված հանրային շենքերին (մանկապարտեզներ ու պոլիկլինիկաներ) ուղղված կայուն էներգաարդյունավետության բարելավումներին, ինչպես ավելի կոնկրետ նկարագրված է Առդիր Ա1-ով սահմանված տեխնիկական նկարագրության մեջ ("**Տեխնիկական նկարագրություն**"): Ծրագիրն իրականացվելու է բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում:

(b) Ծրագիրն իրականացվելու է Նախաձեռնողի կողմից Ծրագրի կառավարման խմբի աջակցությամբ՝ *ի թիվս այլոց*, սույն համաձայնագրի ("**Համաձայնագիր**") դրույթների համաձայն: Նախաձեռնողը կիրականացնի Ծրագիրը պատշաճ կերպ ու արդյունավետորեն: Նախաձեռնողի գործառույթներն ու պարտականությունները սահմանվում են սույն փաստաթղթով:

(c) Բանկը և Վարկառուն 2023 թվականի նոյեմբերի 29-ին կնքել են ֆինանսական պայմանագիր ("**Ֆինանսական պայմանագիր**"), ըստ որի Բանկը համաձայնել է Վարկառուին տրամադրել մինչև 25,000,000.00 (քսանհինգ միլիոն) եվրո վարկ՝ Ծրագիրը ֆինանսավորելու նպատակով՝ համաձայն Ֆինանսական պայմանագրի դրույթների ու պայմանների: Սույն Համաձայնագիրը կնքվում է Բանկի ու Նախաձեռնողի միջև, որպես Ֆինանսական պայմանագրով նախատեսված միջոցների առաջին հանման նախապայման:

(d) Նախաձեռնողը ընդունում է, որ

(i) Բանկի կանոնադրությունը նախատեսում է, որ Բանկը պետք է ապահովի, որ իր միջոցները հնարավորինս ռացիոնալ օգտագործվեն՝ Եվրոպական միության շահերից ելնելով, և որ, համապատասխանաբար, Բանկի գործառնությունների դրույթներն ու պայմանները պետք է համապատասխանեն Եվրոպական միության համապատասխան քաղաքականությանը;

(ii) Բանկը գտնում է, որ տեղեկատվության հասանելիությունն էական դեր է խաղում բնապահպանական և սոցիալական ռիսկերի կրճատման հարցում, ներառյալ իր կողմից ֆինանսավորվող ծրագրերի հետ կապված մարդու իրավունքների խախտումները. այսպիսով Բանկը սահմանել է իր թափանցիկության քաղաքականությունը, որի նպատակն է բարձրացնել Բանկի խմբի ընկերությունների հաշվետվողականությունն իր շահագրգիռ կողմերի նկատմամբ;

(iii) Անձնական տվյալների մշակումը իրականացվելու է Բանկի կողմից՝ Եվրոպական Միության հաստատությունների ու մարմինների կողմից անձնական տվյալների մշակման առումով անհատների պաշտպանության և այդպիսի տվյալների ազատ տեղաշարժի վերաբերյալ ԵՄ կիրառելի օրենքի համաձայն;

(iv) Բանկն աջակցում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարում միջազգային ու Եվրոպական Միության չափանիշների ներդրմանը և խթանում է հարկային լավ կառավարման չափանիշները: Այն սահմանել է քաղաքականություններ ու ընթակարգեր՝ գործող օրենքի առումով անօրինական կամ չարաշահող նպատակներով իր միջոցների չարաշահման ռիսկերից խուսափելու համար: Հարկային խարդախության, հարկերի վճարումից չարամտորեն խուսափման (tax evasion), հարկերի վճարումից խուսափման (tax avoidance), ագրեսիվ հարկային պլանավորման, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ Բանկի խմբի հայտարարությունը հասանելի է Բանկի կայքում և Բանկի պայմանագրային գործընկերներին առաջարկում է հետագա ուղղորդում:

ՀԵՏԵՎԱԲԱՐ, սույնով համաձայնություն է ձեռք բերվում հետևյալի մասին.

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն Համաձայնագրում՝

(a) եթե այլ կերպ սահմանված չէ սույն Համաձայնագրով, ապա Ֆինանսական պայմանագրում սահմանված եզրույթներն ունեն նույն իմաստը սույն Համաձայնագրում;

(b) Հոդվածներին, Դեկլարատիվ դրույթներին, Առդիրներին ու Հավելվածներին կատարվող հղումները, եթե հստակորեն այլ կերպ սահմանված չէ, համարվում են համապատասխանաբար հղումներ սույն Համաձայնագրի հոդվածներին, դեկլարատիվ դրույթներին, առդիրներին ու հավելվածներին; և

(c) բացառությամբ վերոնշյալ (b) պարբերությունում նշված դեպքերի, Ֆինանսական պայմանագրով սահմանված մեկնաբանման սկզբունքներն ունեն նույն ուժը, ինչ սահմանված են սույն Համաձայնագրում:

ՀՈԴՎԱԾ 1

Ծրագրի իրականացում

Նախաձեռնողը պարտավորվում է՝

(a) Ծրագիրն իրականացնել սույն Համաձայնագրի և Տեխնիկական նկարագրության համաձայն: Նախաձեռնողը պետք է Ծրագիրն ավարտի մինչև Տեխնիկական նկարագրության մեջ նշված վերջնակաժամկետը:

(b) Ամբողջությամբ կառավարել Ծրագրի մաս կազմող ակտիվները և աշխատանքում պահպանել իր ամբողջ աշխատունակությունը;

(c) կատարել իր բոլոր պարտավորությունները սույն Համաձայնագրի շրջանակներում մինչև Ծրագրի ավարտը և Ֆինանսական պայմանագրով նախատեսված Վարկառուի բոլոր պարտավորությունների կատարումը և չձեռնարկել կամ թույլ տալ, որ ձեռնարկվի որևէ գործողություն, որ կարող է կանխել կամ խանգարել Ծրագրի այդպիսի կատարմանը, իրագործմանը կամ գործարկմանը:

ՀՈԴՎԱԾ 2

Վարկ

2.1 Ֆինանսական պայմանագիր

Նախաձեռնողը հաստատում է Ֆինանսական պայմանագրի, որի պատճենը առաքվել է իրեն, դրույթների վերաբերյալ ծանուցումը, և հաստատում է, որ ամբողջությամբ տիրապետում է դրա ժամկետներին ու պայմաններին: Նախաձեռնողը պարտավորվում է ձեռնարկել բոլոր քայլերը, որ անհրաժեշտ կամ նպաստավոր են Ֆինանսական պայմանագրի այնպիսի դրույթների իրականացման և կատարման համար, որտեղ հղում է արվել Նախաձեռնողին:

2.2 <u>Ֆինանսական պայմանագրի շրջանակներում հատկացման պայմանները</u>

Չհակասելով Հոդված 2.1-ի ընդհանուր բնույթին՝ Նախաձեռնողը ընդունում է, որ Ֆինանսական պայմանագրով Տրանշերի հատկացումները իրականացվում են Ֆինանսական պայմանագրի Հոդված 1.4-ում սահմանված պայմանների համաձայն՝ Վարկառուի կողմից բավարարման դեպքում:

2.3 <u>Վարկի օգտագործումը</u>

Նախաձեռնողը պարտավորվում է (և պարտավորվում է ապահովել, որ Ծրագրի կառավարման խումբը)՝

(a) Ֆինանսական պայմանագրով Վարկառուի կողմից փոխառված և Նախաձեռնողին հասանելի դարձված բոլոր ֆինանսական միջոցները օգտագործել Ծրագրի իրագործման համար՝ ենթածրագրերի ֆինանսավորման միջոցով, որ ենթակա են Բանկի կողմից հաստատված Հատկացման հայտերի; և

(b) Բանկի կողմից գրավոր պահանջի դեպքում Բանկին տրամադրել Նախաձեռնողի կողմից ստացված գումարների օգտագործման ապացույց:

<u>ՀՈԴՎԱԾ 3</u>

<u>ԳնումներԳնումների ընթացակարգ</u>

Նախաձեռնողը պարտավորվում է Ծրագրի համար ու յուրաքանչյուր Ենթածրագրի համար սարքավորումներ գնել, ծառայություններ ապահովել ու աշխատանքներ պատվիրել գնման ընթացակարգերով, որոնք ի գոհունակություն Բանկի, համապատասխանում են Գնումների ուղեցույցում նկարագրված քաղաքականությանն ու չափանիշներին:

<u>ՀՈԴՎԱԾ 4</u>

<u>Ծրագրի շարունակական պարտավորություններ</u>

Նախաձեռնողը ընդունում ու հասկանում է, որ սույն Հոդված 4-ում Նախաձեռնողի պարտավորություններին հղումները պետք է դիտարկվեն որպես Նախաձեռնողի պարտավորություններ՝ համապատասխան պարտավորություններին համապատասխանելու համար կամ, ըստ կիրառության, երաշխավորելու, որ դրանց համապատասխանությունն ապահովվի Ծրագրի կառավարման խմբի կողմից:

4.1 <u>Տեխնիկական սպասարկում</u>

Նախաձեռնողը պարտավորվում է սպասարկել, վերանորոգել, հիմնանորոգել և թարմացնել յուրաքանչյուր Ենթածրագրի մաս կազմող սեփականությունը, ինչպես հարկն է՝ աշխատանքային լավ վիճակում պահելու նպատակով:

4.2 <u>Ծրագրի ակտիվներ</u>

Բանկի կողմից նախապես գրավոր համաձայնության դեպքում միայն Նախաձեռնողը պարտավորվում է պահպանել սեփականության կամ տնօրինման իրավունքը յուրաքանչյուր Ենթածրագրի մաս կազմող բոլոր կամ գրեթե բոլոր ակտիվների նկատմամբ, կամ անհրաժեշտության դեպքում, փոխարինել կամ թարմացնել այդպիսի

ակտիվները, և ապահովել յուրաքանչյուր Ենթածրագրի էականորեն շարունակական գործելը՝ համաձայն դրա սկզբնական նպատակի, պայմանով, որ Բանկը կարող է հրաժարվել տրամադրել իր համաձայնությունը միայն այն դեպքերում, երբ առաջարկվող գործողությունը կարող է վնասել Բանկի շահերին, որպես Վարկառուի համար փոխատու, կամ կարող է յուրաքանչյուր Ենթածրագիր հանգեցնել Բանկի կողմից ֆինանսավորման համար ոչ իրավասու՝ Բանկի Կանոնադրության կամ «Եվրոպական Միության գործունեության մասին» պայմանագրի Հոդված 309-ի համաձայն:

4.3 <u>Նպատակ</u>

Նախաձեռնողը պարտավորվում է ապահովել յուրաքանչյուր Ենթածրագրի և այդպիսի Ենթածրագրի մաս կազմող գույքերի էականորեն շարունակական գործարկումը՝ համաձայն սկզբնական նպատակների (կամ, իրավիճակից կախված, ապահովել դրանց այդպես պահպանումը):

4.4 <u>Ապահովագրություն</u>

Նախաձեռնողը պարտավորվում է Ծրագրի մաս կազմող բոլոր աշխատաքներն ու գույքը ապահովագրել առաջնակարգ ապահովագրական ընկերությունների միջոցով՝ Հայաստանի Հանրապետությունում համապատասխան ոլորտի ամենահամապարփակ փորձի համաձայն:

4.5 <u>Իրավունքներ եվ թույլտվություններ</u>

Նախաձեռնողը պարտավորվում է ապահովել հետևյալի լիովին ուժի ու գործողություն մեջ լինելը՝

(a) Ծրագրի (և յուրաքանչյուր Ենթածրագրի) իրականացման և գործարկման համար անհրաժեշտ մուտքի և օգտագործման բոլոր իրավունքներն ու բոլոր Լիազորություններն ուժի մեջ են;

(b) Էներգախնայողությունը կապահովվի ու Բանկին կներկայացվի տարեկան հաշվետվություններով;

(c) Ամբողջ ժամանակահատվածի համար վարվելու է որակի կառավարման համակարգ և հաշվետվողականություն, որի նպատակն է երաշխավորել շինարարության որակը, և

(d) որպես Ծրագրի (յուրաքանչյուր Ենթածրագրի) մաս վերանորոգված բոլոր շենքերի համար վերանորոգումից հետո պետք է թողարկվեն էներգաարդյունավետության վկայագրեր (տեխնիկական աջակցության կողմից մշակվելիք մեթոդոլոգիայի և ազգային օրենսդրության համաձայն) հավատարմագրված անկախ փորձագետների կողմից:

4.6 <u>Բնապահպանական եվ սոցիալական չափանիշներ</u>

Նախաձեռնողը պարտավորվում է՝

(a) իրականացնել և գործարկել Ծրագիրը (և յուրաքանչյուր Ենթածրագիր) բնապահպանական և սոցիալական չափանիշներին համապատասխան;

(b) ստանալ ու պահպանել Ծրագրի (ենթածրագրերի) համար անհրաժեշտ բնապահպանական կամ սոցիալական հաստատումները;

(c) ապահովել, որ ցանկացած նման բնապահպանական կամ սոցիալական հաստատում համապատասխանի հետևյալին՝

(i) Բնապահպանական և սոցիալական ուսումնասիրությունները, ազգային օրենսդրությամբ պահանջի դեպքում, պետք է հանրայնորեն հասանելի լինեն կամ ուղարկվեն Բանկ հրապարակման համար;

(ii) որպես մշակութային ժառանգություն ճանաչված ֆասադներով շենքերի ջերմամեկուսացումը պետք է տեղադրվի ներսից՝ դրանով պաշտպանելով և պահպանելով ֆասադների գեղագիտական ու ճարտարապետական արժեքը և

(iii) Ասբեստ պարունակով նյութերի պարագայում դրանց մշակումն ու հեռացումը պետք է իրականացվի ասբեստի հետ աշխատելու տեղական ուղեցույցերի և Հայաստանի Հանրապետության համապատասխան առաջնային ու երկրորդային օրենսդրության համաձայն;

(d) **ԵՄ օրենք՝** Ծրագիրը և ամեն մի կոնկրետ Ենթածրագիր իրականացնել ու գործարկել ԵՄ օրենքի համապատասխան չափանիշների համաձայն այնքանով, որքանով իրագործելի են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ սահմանված են Բանկի կողմից նախքան սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը:

4.7 <u>Ծրագրի կառավարման խումբ</u>

Նախաձեռնողը պարտավորվում է Ծրագրի ամբողջ ընթացքի համար Նախաձեռնողի ենթակայության տակ ստեղծել պատշաճ աշխատակազմով Ծրագրի կառավարման խումբ, որին հավանություն կտա Բանկը:

4.8 <u>Այլ պարտավորություններ</u>

Նախաձեռնողը պարտավորվում է՝

(a) Հաստատել Բանկին, որ ինքը գործում է Բանկի բոլոր գործող քաղաքականություններին ու ուղեցույցներին համահունչ, ներառյալ (առանց սահմանափակման) բնապահպանական և սոցիալական չափանիշները և Բանկի գնումների ուղեցույցը;

(b) իրականացնել ու վարել պատշաճ կառավարման համակարգ յուրաքանչյուր Ենթածրագրի համար՝ երաշխավորելու, որ յուրաքանչյուր Ենթածրագրի(երի) նպատակները լիովին իրականացվել են, այդ թվում նաև (առանց սահմանափակման) որ շինարարական աշխատանքների որակն ամբողջությամբ համապատասխանում է շինարարական չափանիշների լավագույն փորձին, և որ շինարարական աշխատանքների առաջընթացն արձանագրվում է շինհրապարակում տեղակայված գրանցումների մատյանում, և

(c) Բանկի հետ խորհրդակցել՝ նախքան Վարկից ֆինանսավորվող պայմանագրերում որևէ էական փոփոխություններ կատարելը:

<u>ՀՈԴՎԱԾ 5</u>

<u>Ընդհանուր պարտավորություններ</u>

5.1 <u>Գրանցամատյաններ ու արձանագրություններ</u>

Նախաձեռնողը պետք է երաշխավորի, որ վարել է և կշարունակի վարել հաշվապահական պատշաճ գրանցամատյաններ և արձանագրություններ, որոնցում

ամբողջովին և ճշգրիտ կերպով պետք է գրանցվեն Նախաձեռնողի բոլոր ֆինանսական գործարքները, ակտիվներն ու գործունեությունը, ներառյալ Ծրագրի հետ կապված ծախսերը՝ ԸԸՀՍ-ի (Ընդհանուր ընդունված հաշվապահական սկզբունքներ) համաձայն:

5.2 <u>Համապատասխանությունն օրենքներին</u>

Նախաձեռնողը պետք է բոլոր առումներով հետևի այն օրենքներին, որոնց ենթակա են ինքը կամ Ծրագիրը/Ենթածրագիրը, եթե վերջինս ձախողելը կարող է էականորեն դժվարեցնել Նախաձեռնողի համար սույն Համաձայնագրի շրջանակներում իր պարտավորությունների կատարումը:

<u>ՀՈԴՎԱԾ 6</u>

<u>Ազնվության հանձնառություններ</u>

6.1 <u>Արգելված վարքագիծ</u>

(a) Նախաձեռնողը պետք է (և պետք է ապահովի, որ Ծրագրի կառավարման խումբը) չմասնակցի (և չպետք է իր կողմից հանդես եկող որևէ Գործընկերոջ կամ այլ անձի լիազորի կամ թույլատրի մասնակցել) Ծրագրին, Ծրագրի որևէ մրցութային ընթացակարգի, կամ Պայմանագրով նախատեսված որևէ գործարքին առնչվող Արքելված վարքագծում:

(b) Նախաձեռնողը պարտավորվում է ձեռնարկել (և կապահովի, որ Ծրագրի կառավարման խումբը ձեռնարկի) Բանկի կողմից խելամտության սահմաններում պահանջված քայլեր՝ Ծրագրի հետ կապված որևէ Արգելված վարքագծի ցանկացած ենթադրելի կամ կասկածելի դրսևորում հետաքննելու կամ դադարեցնելու համար:

(c) Նախաձեռնողը պարտավորվում է (և կապահովի, որ Ծրագրի կառավարման խումբն ապահովի) ապահովել, որ սույն Փոխառությամբ ֆինանսավորված պայմանագրերը ներառեն անհրաժեշտ դրույթները, որոնք Վարկառուին, Նախաձեռնողին և Ծրագրի կառավարման խմբին թույլ կտան հետաքննել կամ դադարեցնել Ծրագրի հետ կապված որևէ Արգելված վարքագծի ցանկացած ենթադրելի կամ կասկածելի դրսևորում:

6.2 <u>Պատժամիջոցներ</u>

Նախաձեռնողը (և կապահովի, որ Ծրագրի կառավարման խումբը նույնպես) չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն

(a) Որևէ Ենթածրագրի հետ կապված որևէ գործարար հարաբերության մեջ մտնի, և/կամ դրամական միջոցներ և/կամ տնտեսական ռեսուրսներ տրամադրի Պատժամիջոցների ենթարկված որևէ անձի կամ ի օգուտ նրա, կամ

(b) օգտագործի Վարկային միջոցներն ամբողջությամբ կամ մասնակի, կամ այդ միջոցները փոխ տա, նվիրաբերի կամ այլ կերպ հասանելի դարձնի որևէ անձի ցանկացած կերպ, որ կհանգեցնի իր և/կամ Բանկի կողմից որևէ Պատժամիջոցի խախտման, կամ

(c) Ֆինանսական պայմանագրի շրջանակներում որևէ վճարում ամբողջությամբ կամ մասնակիորեն ֆինանսավորի Պատժամիջոցների ենթարկված անձի, Պատժամիջոցներ խախտած որևէ անձի հետ գործունեություններից կամ բիզնեսից ձևավորված միջոցներից կամ որևէ այլ կերպ, որն անմիջականորեն կհանգեցնի Նախաձեռնողի կամ Բանկի կողմից որևէ Պատժամիջոցի խախտման:

Ընդունվել ու համաձայնություն է ձեռք բերվել, որ սույն Հոդված 6.2-ով սահմանված պարտավորությունները պահանջվում են ու տրվում են Բանկին այնքանով, որքանով թույլատրելի է ԵՄ-ի որևէ գործող հակաբոյկոտի կանոնի համաձայն՝ ինչպես Կանոնակարգ (EC) 2271/96-ով:

6.3 <u>Համապատասխան անձինք</u>

Նախաձեռնողը պարտավորվում է (և կապահովի, որ Ծրագրի կառավարման խումբը) խելամիտ ժամկետներում ձեռնարկել համապատասխան միջոցառումներ ցանկացած Համապատասխան անձի նկատմամբ, ով իր մասնագիտական պարտականությունների իրականացման ընթացքում կատարած Արգելված վարգաքծի առնչվող դատարանի վերջնական և անբեկանելի վճռի առարկա է հանդիսանում՝ ապահովելու, որ այդպիսի Համապատասխան անձը հեռացվի Փոխառությանը և Ծրագրին առնչվող որևէ գործողություններից:

6.4 <u>Շահերի բախում</u>

Չխախտելով Գնումների ուղեցույցը և որպեսզի Նախաձեռնողը արդյունավետ կերպով կանխի, հայտնաբերի ու լուծի շահերի բախումը՝ Նախաձեռնողը պետք է ապահովի, որ նախքան Ծրագրի շրջանակներում որևէ պայմանագրի շնորհումը

(a) Հաջողակ հայտատուի Իրական շահառուները (ներառյալ համատեղ ձեռնարկության գործընկերներն ու ենթակապալառուները), ովքեր Վարկառուի կամ Նախաձեռնողի կառավարման մարմնի(ների) կամ ղեկավար անձի(անձանց) (ըստ կիրառության) ներկայացուցչի(ների), անդամների Մերձավորը կամ Ընտանիքի Անդամներն են, բացահայտվեն և նրանց մասին անմիջապես տեղեկացվի Բանկին: Ցանկացած նման բարեկամական կապ շահերի բախում է՝ սույն Հոդվածի ու Գնումների ուղեցույցի նպատակներից ելնելով, և անմիջապես պետք է ծանուցվի Բանկին, և

(b) որդեգրվեն պատշաճ միջոցառումներ՝ ցանկացած հնարավոր շահերի բախում վերացնելու համար, ինչպիսիք են ֆինանսական, տնտեսական կամ այլ անձնական շահերը (i) վերոնշյալ (a) պարբերությամբ սահմանված Իրական շահառուի(ների) և Նախաձեռնողի ղեկավար մարմնի, ներկայացուցչի(ների) կամ ղեկավար անձի(անց) ցանկացած անդամի(ների) միջև, և (ii) վերոնշյալ (a) պարբերությամբ սահմանված Իրական շահառուի(ների) և Վարկառուի որևէ ղեկավար անձի(անձանց) կամ ներկայացուցիչների միջև, և յուրաքանչյուր դեպքի համար, և այդպիսի միջոցառումները պետք անմիջապես ծանուցվեն Բանկին:

6.5 <u>Տվյալների պաշտպանություն</u>

(a) Սույն Համաձայնագրի վերաբերյալ Բանկին տեղեկատվություն (Նախաձեռնողի՝ սույն Համաձայնագրի կառավարման մեջ ներգրավված անձնակազմի զուտ կոնտակտային տվյալներից (”**Կոնտակտային մանրամասներ**”) զատ) տրամադրելիս Նախաձեռնողը պետք է խմբագրի կամ ինչ-որ այլ կերպ փոփոխի այդ տեղեկատվությունը (ըստ անհրաժեշտության), որ այն չներառի նույնականացված կամ նույնականացվելիք անհատներին առնչվող որևէ տեղեկատվություն ("**Անձնական տեղեկատվություն**"), բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Համաձայնագրով կոնկրետ պահանջվում է, կամ Բանկի կողմից գրավոր հատուկ պահանջվել է այդպիսի տեղեկատվությունը տրամադրել Անձնական տեղեկատվության տեսքով:

(b) Նախքան սույն Համաձայնագրի վերաբերյալ Բանկին որևէ Անձնական տեղեկատվություն տրամադրելը (բացի Կոնտակտային մանրամասներից / Նախաձեռնողի՝ սույն Համաձայնագրի կառավարման մեջ ներգրավված անձնակազմի զուտ կոնտակտային տվյալներ), Նախաձեռնողը պետք է երաշխավորի, որ յուրաքանչյուր անհատ, ում առնչվում է այդպիսի Անձնական տեղեկատվությունը

(i) տեղեկացվել է Բանկին տեղեկատվությունը տրամադրելու վերաբերյալ (ներառյալ բացահայտվելիք Անձնական տվյալների կատեգորիաները), և

(ii) տեղեկացվել է Բանկի գաղտնիության հայտարարության մեջ ներառված իր վարկավորման և ներդրումային գործունեություններին առնչվող տեղեկատվության մասին, որ ժամանակ առ ժամանակ նշվում է https://www.eib.org/en/privacy/lending հղումով (կամ այլ հասցեով, որ Բանկը կարող է գրավոր ծանուցել Նախաձեռնողին ժամանակ առ ժամանակ):

ՀՈԴՎԱԾ 7

Հավաստիացումներ եվ երաշխավորումներ

7.1 Ընդհանուր Հավաստիացումներ ու երաշխավորումներ

Նախաձեռնողը Բանկին հավաստիացնում և երաշխավորում է, որ

(a) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քաղաքապետարան է հանդիսանում և իրավունք ունի իրականացնել իր գործունեությունները ինչպես ներկայումս և իրավունք ունի տնօրինել իր սեփականությունն ու այլ ակտիվները,

(b) իրավասու է իրականացնել, տրամադրել և կատարել սույնով վերապահված իր պարտավորությունները, և որ ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ կորպորատիվ, բաժնետիրական և այլ գործողությունները վերոնշյալների իրականացումը, տրամադրումը և կատարումը լիազորելու համար,

(c) սույն Համաձայնագիրը հանդիսանում է իր՝ իրավաբանորեն վավեր, պարտադիր ուժ ունեցող և ուժի մեջ գտնվող պարտավորությունները,

(d) սույն Համաձայնագրի դրույթների համաձայն և դրանց շրջանակներում, իր պարտավորությունների իրագործումը, տրամադրումն ու կատարումը ներկայումս և ապագայում չի հակասի ու խախտի

(i) որևէ գործող օրենք, կանոնադրություն, կանոն կամ կանոնակարգ, կամ որևէ դատավճիռ, որոշում կամ թույլտվություն, որի առարկա է հանդիսանում,

(ii) որևէ համաձայնագիր կամ դրա պարտադիր այլ փաստաթուղթ, որ կարող է էական անբարենպաստ ազդեցություն ունենալ սույն Համաձայնագրի շրջանակներում իր պարտավորությունների կատարման վրա,

(iii) իր կանոնադրության որևէ դրույթ

(e) 2023թ. հունիսի 14-ից ի վեր Էական անբարենպաստ փոփոխություններ չեն եղել,

(f) ոչ մի դատական, արբիտրաժային, վարչական վարույթ կամ հետաքննություն չի ընթանում կամ ըստ իր իմացության չի սպառնում կամ առկախված չէ որևէ դատարանի, միջնորդ մարմնի կամ գործակալության առջև, որը հանգեցրել է կամ, անբարենպաստ որոշման դեպքում բավական հավանական է, որ կհանգեցնի Էական անբարենպաստ փոփոխության, և որ իր դեմ կամ իր ենթակայության տակ կառույցների դեմ առկա չէ որևէ չբավարարված դատական վճիռ կամ որոշում,

(g) ձեռք է բերել/տրամադրել է սույն Համաձայնագրի հետ կապված և սույնի ու Ծրագրի շրջանակներում իր պարտավորություններն օրինականորեն կատարելու համար անհրաժեշտ բոլոր Լիազորությունները, և որ բոլոր այդ Լիազորությունները լիովին ուժի և գործողության մեջ են և ընդունելի են որպես ապացույց,

(h) ձեռք է բերել/տրամադրել է սույնի հետ կապված և սույնի ու Ծրագրի շրջանակներում իր պարտավորություններն օրինականորեն կատարելու համար անհրաժեշտ բոլոր Լիազորությունները, և որ բոլոր այդ Լիազորությունները լիովին ուժի և գործողության մեջ են և ընդունելի են որպես ապացույց,

(i) Իր ակտիվների մասով Երաշխիք առկա չէ,

(j) համահունչ է Հոդված 4.6-ին և, որքանով որ ինքը տեղեկացված և համոզված է (կատարված պատշաճ և մանրակրկիտ հետազոտության արդյունքում), Ծրագրի առնչությամբ Բնապահպանական կամ Սոցիալական ոչ մի հայց չի ներկայացվել կամ չի պատրաստվում ներկայացվել իր կամ Նախաձեռնողի դեմ,

(k) չի խախտում (և իրեն հասանելի դարձված Վարկային միջոցների հատկացումից հետո չի խախտի) իր նկատմամբ կիրառվող որևէ սահմանափակում՝ ֆինանսական պարտքի ստանձնման հետ կապված,

(l) համապատասխանում է սույն Համաձայնագրի բոլոր պարտավորություններին,

(m) որքանով որ ինքը տեղեկացված է, Նախաձեռնողի կողմից Ծրագրում ներդրված ֆինանսական միջոցներն ապօրինի ծագման չեն, ներառյալ Փողերի լվացման և Ահաբեկչության Ֆինանսավորման հետ կապված դեպքերը,

(n) ո՛չ Նախաձեռնողը, ո՛չ որևէ Համապատասխան Անձ չի կատարել (i) Ծրագրի կամ Պայմանագրով նախատեսված որևէ գործարքի առնչությամբ որևէ Արգելված վարքագիծ, կամ (ii) Ահաբեկչության ֆինանսավորման կամ Փողերի լվացման հետ կապված որևէ ապօրինի գործողություն,

(o) Ծրագիրը (ներառյալ, առանց սահմանափակման, Փոխառությամբ ֆինանսավորված կամ ֆինանսավորվելիք պայմանագրերի բանակցումը, կնքումն ու կատարումը) չի ներառել կամ առաջացրել որևէ Արգելված վարքագիծ,

(p) Նախաձեռնողը և/կամ ցանկացած Համապատասխան անձ

(i) Պատժամիջոցների ենթարկված անձ է; կամ

(ii) խախտել է որևէ Պատժամիջոց;

Ընդունվել ու համաձայնություն է ձեռք բերվել, որ սույն պարբերություն (p)-ում սահմանված հավաստիացումները պահանջվում են ու տրվում են Բանկին այնքանով, որքանով դա անելը թույլատրելի է ԵՄ-ի որևէ գործող հակաբոյկոտի կանոնի համաձայն՝ ինչպես Կանոնակարգ (EC) 2271/96-ը:

Վերոգրյալ հավաստիացումները և երաշխավորումները տրվել են սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթվին և, բացառությամբ վերոնշյալ պարբերություն (f)-ի հավաստիացման, պետք է համարվեն կրկնված՝ հաշվի առնելով յուրաքանչյուր Հատկացման ընդունման, յուրաքանչյուր Հատկացման ամսաթվի և յուրաքանչյուր Վճարման ամսաթվի՝ այդ պահին առկա փաստերն ու հանգամանքները:

ՀՈԴՎԱԾ 8

Տեղեկատվություն եվ այցելություններ

8.1 Ծրագրին առնչվող տեղեկատվություն

Նախաձեռնողը պետք է՝

(a) Բանկին տրամադրի, ըստ անհրաժեշտության,

(i) տեղեկատվություն՝ Ֆինանսական պայմանագրի Առդիր Ա.2-ով սահմանված բովանդակությամբ, ձևով և ժամկետներում կամ այլ կերպ, ինչպես ժամանակ առ ժամանակ կհամաձայնեցվի Կողմերի միջև, և

(ii) Ծրագրի ֆինանսավորմանը, գնումներին, իրականացմանը, գործարկմանը, ինչպես նաև բնապահպանական կամ սոցիալական խնդիրներին առնչվող նման տեղեկատվություն կամ լրացուցիչ փաստաթուղթ, կամ NDICI-GE Կանոնակարգի կամ Ֆինանսական կանոնակարգի շրջանակներում իր պարտավորությունները կատարելու համար Բանկի կողմից պահանջված ցանկացած տեղեկատվություն կամ լրացուցիչ փաստաթուղթ, որ Բանկը կարող է հիմնավոր կերպով պահանջել ողջամիտ ժամկետներում՝

մշտական պայմանով, որ եթե նման տեղեկատվությունը կամ փաստաթուղթը Բանկին չի տրամադրվում ժամանակին, և Նախաձեռնողը չի շտկում բացթողումը Բանկի կողմից գրավոր կերպով սահմանված ողջամիտ ժամկետում, Բանկը իրագործելիության սահմաններում կարող է լրացնել բացը՝ Նախաձեռնողի հաշվին նշանակելով իր անձնակազմին կամ խորհրդատուի կամ որևէ երրորդ կողմի, իսկ Նախաձեռնողը պետք է տվյալ անձանց տրամադրի այդ նպատակի համար անհրաժեշտ ամբողջ աջակցությունը,

(b) առանց ուշացումների Բանկի հաստատմանը ներկայացնի Ծրագրի ցանկացած էական փոփոխություն՝ միաժամանակ հաշվի առնելով նախքան սույն Համաձայնագրի ստորագրումը Ծրագրի մասով Բանկին ներկայացված բացահայտումները, *այդ թվում*՝ Ծրագրի գնի, նախագծի, պլանների, ժամանակացույցի կամ նախատեսված ծախսերի կամ ֆինանսական ծրագրի հետ կապված,

(c) Բանկին անհապաղ տեղեկացնի

(i) որևէ երրորդ կողմի նախաձեռնած ցանկացած գործողության, բողոքի կամ բարձրաձայնված առարկության մասին, ինչպես նաև Նախաձեռնողի կողմից ստացված որևէ իրական բողոքի մասին, որը Ծրագրի վրա ազդող բնապահպանական, սոցիալական կամ այլ հարցերի առումով էական է,

(ii) ցանկացած բնապահպանական կամ սոցիալական պահանջ, որն ըստ իր տեղեկության մեկնարկել է, ընթանում կամ ակնկալվում է իր դեմ,

(iii) Նախաձեռնողին հայտնի ցանկացած փաստի կամ դեպքի մասին, որ կարող է էապես խաթարել կամ ազդել Ծրագրի կատարման կամ գործարկման պայմանների վրա,

(iv) Ծրագրին առնչվող ցանկացած դեպք կամ դժբախտ պատահար, որ բացասական ազդեցություն ունի կամ հնարավոր է, որ կունենա Բնապահպանական կամ սոցիալական խնդիրների վրա,

(i) բնապահպանության և սոցիալական ցանկացած չափանիշի իր անհամապատասխանության մասին,

(ii) բնապահպանական կամ սոցիալական որևէ հաստատման ցանկացած կասեցման, չեղյալ հայտարարման կամ էական փոփոխության մասին,

(iii) ցանկացած Ենթածրագրին առնչվող որևէ Արգելված վարքագծի կամ որևէ Պատժամիջոցի վերաբերյալ հավաստի մեղադրանքի, բողոքի կամ տեղեկատվության մասին,

(iv) եթե տեղեկացել է որևէ փաստերի կամ տեղեկատվության մասին, որ հաստատում կամ խելամտության սահմաններում ենթադրում են, որ (ա) Ծրագրի կամ որևէ Ենթածրագրի հետ կապված տեղի է ունեցել որևէ Արգելված վարքագիծ, կամ (բ) իր բաժնետիրական կապիտալի կամ Ծրագրի մեջ ներդրված որևէ միջոց ապօրինի ծագման է,

և այդպիսի հարցերի մասով ձեռնարկվելիք գործողություններ սահմանի:

8.2 <u>Նախաձեռնողին առնչվող տեղեկատվություն</u>

Նախաձեռնողը պետք է՝

(a) Բանկին տրամադրի լրացուցիչ տեղեկատվություն, ապացույց կամ փաստաթուղթ

(i) իր ընդհանուր ֆինանսական վիճակի կամ սույնով սահմանված պարտավորությունների համապատասխանության նման հավաստագրերի վերաբերյալ, և

(ii) Բանկի՝ դյու դիլիջենս ուսումնասիրության պահանջներին Նախաձեռնողի համապատասխանության վերաբերյալ՝ ներառելով, բայց չսահմանափակվելով "Ճանաչիր քո հաճախորդին" (KYC-ՃՔՀ) կամ նույնականացման և ստուգման նմանատիպ ընթացակարգերը,

ըստ պահանջի և խելամիտ ժամկետներում, և

(b) անհապաղ Բանկին տեղեկացնի

(i) սույն Համաձայնագրի կնքման ամսաթվից հետո Ծրագրի հետ կապված Նախաձեռնողի նկատմամբ կիրառվող օրենքների ցանկացած էական փոփոխության մասին,

(ii) ցանկացած փաստի մասին, որ նրան պարտավորեցնում է վաղաժամկետ մարել որևէ ֆինանսական պարտք կամ Եվրոպական Միության որևէ ֆինանսավորում,

(iii) ցանկացած իրադարձության կամ որոշման մասին, որ համարվում է կամ կարող է հանգեցնել Կանխավճարման դեպքի,

(iv) իր ակտիվների մասով որևէ երաշխիք հօգուտ երրորդ կողմի փոխանցելու իր կողմից որևէ մտադրության մասին,

(v) իր կողմից Ծրագրի որևէ էական բաղադրիչի սեփականությունից հրաժարվելու իր որևէ մտադրության մասին,

(vi) որևէ փաստի կամ իրադարձության մասին, որ ողջամտության սահմաններում հավանական է, որ կարող է էականորեն խոչընդոտել սույնով Նախաձեռնողին վերապահված որևէ պարտավորության պատշաճ կատարումը,

(vii) ցանկացած Դեֆոլտի Իրավիճակի մասին, որ ծագել կամ կարող է առաջ գալ կամ կանխատեսվում է,

(viii) օրենքով թույլատրելի չափով, դատարանի, վարչական կամ նմանատիպ հանրային իշխանության կողմից որևէ դատական, արբիտրաժային կամ վարչական վարույթի կամ հետաքննության վերաբերյալ, որն ըստ իր տեղեկությունների և համոզմամբ, առկա է, անխուսափելի է կամ ընթանում է Նախաձեռնողի կամ Ծրագրի կառավարման խմբի դեմ կամ նրանց վերահսկող մարմինների կամ Նախաձեռնողի ու Ծրագրի կառավարման խմբի ղեկավար մարմինների անդամների դեմ Վարկին, Փոխառությանը կամ Ծրագրին առնչվող Արգելված վարքագծի հետ կապված,

(ix) որևէ դատական, արբիտրաժային կամ վարչական վարույթի կամ հետաքննության մասին, որ գոյութուն ունեն, սպառնում են սկսել կամ ընթացքի մեջ են, որոնք անբարենպաստ վճռի պարագայում կարող են հանգեցնել Էական անբարենպաստ փոփոխության, և

(x) Նախաձեռնողի, Ծրագրի կառավարման խմբի կամ որևէ Համապատասխան անձին առնչվող ցանկացած Պատժամիջոցների վերաբերյալ որևէ պահանջի, գործողության, վարույթի, պաշտոնական ծանուցման կամ հետաքննության մասին:

8.3 <u>Այցելություններ, մուտքի իրավունք և հետաքննություններ</u>

(a) Նախաձեռնողը պարտավոր է թույլատրել Բանկին ինչպես նաև, եթե կա՛մ պահանջվել է համապատասխան ԵՄ իրավունքի պարտադիր դրույթներով, կա՛մ NDICI-GE Կանոնակարգի կամ Ֆինանսական Կանոնակարգի համաձայն, ըստ կիրառության, Աուդիտորական Եվրոպական դատարանին, Եվրոպական Հանձնաժողովին, Խարդախության դեմ պայքարի Եվրոպական Գրասենյակին և Եվրոպական դատախազությանը, ինչպես նաև վերոնշյալ կառույցների (յուրաքանչյուրը առանձին ″**Համապատասխան կողմ**″) կողմից նշանակված անձանց

(i) այցելել Ծրագրի մաս կազմող տեղամասերը, տեղակայանքները և աշխատանքները,

(ii) զրույցներ ունենալ Նախաձեռնողի ներկայացուցիչների հետ և չխոչընդոտել Ծրագրում ներգրավված կամ Ծրագրի կողմից ազդեցության ենթարկված ցանկացած այլ անձանց հետ շփումներին,

(iii) անկացնել հետաքննություններ, զննումներ, տեղում աուդիտներ կամ ստուգումներ, ըստ իրենց ցանկության; ուսումնասիրել Վարկին, Պայմանագրին և Ծրագրի կատարմանն առնչվող Նախաձեռնողի գրանցամատյաններն ու արձանագրությունները և կարողանալ վերցնել առնչվող փաստաթղթերի պատճենները օրենքով թույլատրելի սահմաններում:

(b) Նախաձեռնողը պետք է Բանկին կամ Համապատասխան կողմերից որևէ մեկին տրամադրի կամ ապահովի, որ Բանկին կամ որևէ Համապատասխան կողմին տրամադրեն հասանելիությունը սույն Հոդվածով նկարագրված նպատակների համար տեղեկատվության, օբյեկտների ու փաստաթղթերի առնչությամբ, ինչպես նաև անհրաժեշտ ամբողջ աջակցությունը:

(c) Բացի այդ, Նախաձեռնողը պետք է թույլ տա Եվրոպական Հանձնաժողովի ու Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակությանը մասնակցել սույն Համաձայնագրին, Փոխառությանը կամ Ծրագրին առնչվող ցանկացած մշտադիտարկային առաքելության՝ կազմակերպված Բանկի կողմից:

(d) Փոխառությանը և/կամ Ծրագրին առնչվող Արգելված վարքագծի հետ կապված իրական մեղադրանքի, բողոքի կամ տեղեկատվության դեպքում Նախաձեռնողը պետք է բարեխղճորեն խորհրդակցի Բանկի հետ համապատասխան գործողությունների ձեռնարկման վերաբերյալ: Մասնավորապես, եթե ապացուցվի, որ երրորդ կողմը Արգելված վարքագիծ է կատարել Փոխառության և/կամ Ծրագրի հետ կապված, որ հանգեցրել է Փոխառության սխալ կիրառման, Բանկը, չխախտելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները, կարող է տեղեկացնել Նախաձեռնողին, եթե ըստ իրեն Նախաձեռնողը պետք է ձեռնարկի համապատասխան վերականգնման միջոցառումներ նման երրորդ կողմի նկատմամբ: Նման դեպքում Նախաձեռնողը պետք է բարեխղճորեն դիտարկի Բանկի տեսակետները և Բանկին տեղյակ պահի:

ՀՈԴՎԱԾ 9

Վճարներ և ծախսեր

9.1 Հարկեր, տուրքեր և վճարներ

Առկայության դեպքում, Նախաձեռնողը պետք է վճարի ցանկացած հարկ, գանձում, ներկրման հարկ, մաքս կամ այլ վճար կամ նմանատիպ պահում (այդ թվում նշվածների վճարումը ձախողելու կամ ուշացնելու արդյունքում վճարման ենթակա ցանկացած տոկոսագումար), ներառյալ սույն Համաձայնագրի կատարումից կամ իրականացումից ծագած ցանկացած դրոշմատուրք և գրանցման վճար:

9.2 Այլ վճարներ

Առկայության դեպքում, Նախաձեռնողը պետք է ստանձնի բոլոր վճարների և ծախսերի վճարումը՝ այդ թվում մասնագիտական, բանկային կամ տարադրամի փոխանակման հարկերը, որ գոյացել են սույն Համաձայնագրի կամ դրան առնչվող այլ փաստաթղթի պատրաստման, կատարման, իրականացման, գործարկման և դադարեցման արդյունքում, սույն Համաձայնագրի կամ դրան առնչվող այլ փաստաթղթի որևէ փոփոխման, լրացման կամ դրանից հրաժարման արդյունքում, ինչպես նաև Փոխառության համար որևէ երաշխիքի փոփոխման, ստեղծման, կառավարման, գործարկման և իրականացման արդյունքում:

9.3 Պահումներ

Առկայության դեպքում, Նախաձեռնողը պետք է վճարի սույն Համաձայնագրի հետ կապված կամ դրա շրջանակներում Բանկին վճարման ենթակա բոլոր գումարները առանց որևէ ազգային կամ տեղական հարկման պահումների, պայմանով որ, եթե Նախաձեռնողը ստիպված է կատարել ցանկացած նման պահում, ապա Բանկին վճարում է կատարում այնպիսի հաշվարկով, որ պահումից հետո Բանկի կողմից ստացվող զուտ գումարը համարժեք լինի վճարման ենթակա գումարին:

ՀՈԴՎԱԾ 10

Համաձայնագրի խախտման վերացման միջոցներ

10.1. Անհամապատասխանություն

Բանկը կարող է կիրառել գործող օրենքի շրջանակում հասանալի բոլոր իրավունքները, եթե Նախաձեռնողը ձախողել է կատարել սույն Համաձայնագրի շրջանակներում որևէ պարտավորություն, բացառությամբ եթե անհամապատասխանությունը կամ հանգամանքը, որի արդյունքում առաջացել է անհամապատասխանությունը, հնարավոր է շտկել և շտկվել է Բանկի կողմից Նախաձեռնողին ներկայացված ծանուցման մեջ նշված խելամիտ ժամկետում:

Սույն Համաձայնագրի նպատակներից ելնելով՝ Նախաձեռնողը չի կատարի սույն Համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունները, եթե Դեկլարատիվ դրույթներում նշված որևէ փաստ էական փոփոխության է ենթարկվել և էականորեն չի վերականգնվել, և եթե տվյալ փոփոխությունը խախտում է սույն Համաձայնագրի կամ Ֆինանսական Պայմանագրի շրջանակում Բանկի իրավունքները, Բանկի շահերը, որպես Վարկառուի փոխատու, կամ բացասաբար է ազդում Ծրագրի իրականացման կամ գործարկման վրա:

10.2. Իրավունքից հրաժարման բացառումը

Սույն Համաձայնագրի շրջանակում Բանկի կողմից իր որևէ իրավունքի կամ խախտման վերացման միջոցի իրականացման ձախողումը կամ հետաձգումը, կամ դրանց մասնակի կամ առանձին կատարումը չպետք է համարվի նման իրավունքից կամ վերացման միջոցից հրաժարում: Սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքներն ու խախտման վերացման միջոցները փոխլրացնող բնույթ են կրում և չեն բացառում օրենքով նախատեսված այլ իրավունքներն ու խախտումների վերացման միջոցները:

ՀՈԴՎԱԾ 11

Օրենք եվ իրավազորություն

11.1 Ղեկավարող օրենք

Սույն Համաձայնագիրը և դրանից բխող կամ դրա հետ կապված ոչ-պայմանագրային պարտավորությունները ղեկավարվում և մեկնաբանվում են Լյուքսեմբուրգի օրենքների համաձայն:

11.2 Իրավազորություն

(a) Սույն Պայմանագրի կողմերը սույնով փոխադարձ համաձայնության են եկել, որ սույն Պայմանագրին առնչվող բոլոր վեճերը պետք է ներկայացվեն Եպրոպական Միության Արդարադատության դատարան (″**Դատարան**″), և սույնով կողմերը վեճերի լուծման իրավազորությունը շնորհում են Դատարանին:

(b) Սույն Պայմանագրի կողմերը սույնով հրաժարվում են ցանկացած անձեռնմխելիությունից, որ կարող են ունենալ Դատարանի իրավազորությունից, կամ դրա դեմ առարկելու իրավունքից: Սույն Հոդվածի համաձայն Դատարանի կողմից ընդունված որոշումը վերջնական ու պարտադիր է յուրաքանչյուր կողմի համար առանց սահմանափակումների ու վերապահումների:

ՀՈԴՎԱԾ 12

Ծանուցումներ

12.1 Ծանուցման ձև

(a) Սույն Համաձայնագրի շրջանակում ներկայացված ցանկացած ծանուցում կամ այլ հաղորդագրություն պետք է լինի գրավոր և, եթե այլ բան սահմանված չէ, կարող է ներկայացվել գրության կամ էլեկտրոնային նամակի տեսքով:

(b) Ծանուցումները և այլ հաղորդագրությունները, որոնց համար սույն Համաձայնագրով սահմանված են ֆիքսված ժամկետներ, կամ որոնցով սահմանված են հասցեատերերի համար պարտադիր ժամկետներ, կարող են հանձնվել առձեռն, պատվիրված նամակով կամ էլեկրոնային փոստով: Նման ծանուցումները և հաղորդագրությունները համարվում են մյուս Կողմի կողմից ստացված

(i) առաքման օրը առձեռն կամ պատվիրված նամակով հանձնելու դեպքում;

(ii) ցանկացած էլեկտրոնային նամակի դեպքում միայն այն դեպքում, երբ նման էլեկտրոնային նամակն իրականում ստացվել է ընթեռնելի ձևով, և միայն այն դեպքում, եթե այն հասցեագրված է այնպես, ինչպես մյուս Կողմն է սահմանել այդ նպատակով:

(c) Նախաձեռնողի կողմից էլեկտրոնային փոստով Բանկին ներկայացված ցանկացած ծանուցում

(i) պետք է առարկա տողում նշի Ֆինանսական պայմանագիրը, և

(ii) պետք է լինի ծանուցման ոչ խմբագրվող էլեկտրոնային պատկերի (PDF, TIF կամ Կողմերի միջև համաձայնեցված այլ ընդհանուր չխմբագրվող ֆայլի ձևաչափով) տեսքով՝ ստորագրված Նախաձեռնողի անհատական ներկայացուցչության իրավունքով լիազորված ստորագրողի կամ համատեղ ներկայացուցչության իրավունքով լիզորված երկու կամ ավել ստորագրողների կողմից, ըստ անհրաժեշտության՝ կցված էլեկտրոնային նամակին:

(d) Նախաձեռնողի կողմից սույն Համաձայնագրի ցանկացած դրույթի համաձայն տրված ծանուցումները, Բանկի պահանջի դեպքում, պետք է ներկայացվեն Բանկ այն բավարար փաստերի հետ մեկտեղ, որոնցով հավաստվում են Նախաձեռնողի անունից ծանուցումը ստորագրելու լիազորությամբ օժտված անձի կամ անձանց իրավասությունը, ինչպես նաև այդ անձի կամ անձանց ստորագրության վավեր նմուշները:

(e) Չխախտելով սույն Հոդված 12.1-ի համաձայն էլեկտրոնային փոստով ուղարկված ծանուցման կամ հաղորդագրության վավերությունը՝ Բանկի կողմից պահանջված ցանկացած այլ ծանուցում, հաղորդագրություն կամ փաստաթուղթ պետք է նաև համապատասխան կողմին ուղարկվի նաև պատվիրված նամակով՝ ամենաուշը հաջորդ Աշխատանքային օրը:

(f) Կողմերը համաձայն են, որ վերը նշված ցանկացած հաղորդագրություն (այդ թվում՝ էլեկտրոնային նամակով ներկայացված) հաղորդակցման ընդունված ձև է, դատարանում պետք է համարվի ընդունելի ապացույց և կրում է նույն ապացուցողական արժեքը, ինչ ձեռքի տակ ունեցած համաձայնագիրը (sous seing privé-մասնավոր պայմանագիր):

12.2 Հասցեներ

Սույն Համաձայնագրի շրջանակում կամ դրա հետ կապված ցանկացած հաղորդագրություն կամ փաստաթուղթ պետք է ներկայացվի յուրաքանչյուր Կողմի ներքոնշյալ հասցեով կամ էլեկտրոնային հասցեով՝

Բանկի համար՝	Հասցեատեր՝ OPS Կոնրադ Ադենաուեր բուլվար 98-100, L-2950, Լյուքսեմբուրգ էլ-փոստի հասցե՝ ops-nc2-projects@eib.org
Նախաձեռնողի համար՝	Երևանի քաղաքապետարան Հասցեատեր՝ Երևանի քաղաքապետ պարոն Տիգրան Ավինյան Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Արգիշտի փող. 1 էլ-փոստի հասցե՝ mayor@yerevan.am

12.3 Հաղորդակցման միջոցների մանրամասների վերաբերյալ ծանուցում

Բանկը և Նախաձեռնողը պետք է մյուս կողմին անահապաղ գրավոր ծանուցեն իրենց հաղորդակցման միջոցների համապատասխան մանրամասների փոփոխությունների վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 13

Եզրափակիչ դրույթներ

13.1 Ամբողջական Համաձայնագիր

Սույն Համաձայնագիրը կազմում է Բանկի և Նախաձեռնողի միջև դրա կողմից կանոնակարգվող հարցերի առումով ամբողջական համաձայնագիր և փոխարինում է նույն հարցի շուրջ ցանկացած՝ բացայատ կամ ենթադրյալ, այլ նախկին համաձայնություն:

13.2 Անձեռնմխելիությունից հրաժարում

Այնքանով, որքանով որ Նախաձեռնողը կարող է ցանկացած իրավական համակարգի շրջանակում պահանջել իր կամ իր ակտիվներից որևէ մեկի առնչությամբ անձեռնմխելիություն հայցից, հարկադրումից, կալանքից կամ այլ դատական գործընթացից՝ ինքնիշխանության կամ այլ հիմքերով՝ սույն Համաձայնագրի շրջանակներում կամ դրա հետ կապված իր պարտավորությունների մասով Նախաձեռնողը սույնով անդառնալիորեն համաձայնում է չպահանջել և սույնով անդառնալիորեն հրաժարվում է այդպիսի անձեռնմխելիությունից՝ այդպիսի իրավական համակարգի օրենքներով թույլատրվող ամբողջ ծավալով:

13.3 Անվավերություն

Եթե որևէ պահի սույն Համաձայնագրի որևէ դրույթ համարվում կամ դառնում է անօրինական, անվավեր կամ որևէ իմաստով ոչ պարտադիր, կամ սույն Համաձայնագիրը որևէ իմաստով համարվում կամ դառնում է ուժը կորցրած ցանկացած իրավազորության շրջանակում, այդպիսի անօրինականությունը, անվավերությունը, ոչ պարտադրելիությունը կամ ուժը կորցրած լինելը չեն կարող կասկածի տակ դնել

(a) այդ իրավազորության շրջանակում սույն Համաձայնագրի որևէ այլ դրույթի օրինականությունը, վավերությունը կամ պարտադրելիությունը, կամ այդ իրավական համակարգում որևէ այլ իմաստով սույն Համաձայնագրի ուժի մեջ լինելը, կամ

(b) իրավական այլ համակարգում սույն Համաձայնագրի այս կամ որևէ այլ դրույթի օրինականությունը, վավերությունը կամ պարտադրելիությունը կամ նման այլ իրավազորության գործող օրենքների համաձայն սույն Համաձայնագրի ուժի մեջ լինելը:

13.4 Փոփոխություններ

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել կողմերի միջև գրավոր համաձայնությամբ: Նման փոփոխություններն ուժի մեջ են մտնում համապատասխան փոփոխման փաստաթղթերով սահմանված ժամկետներում:

13.5 Կրկնօրինակներ

Սույն Համաձայնագիրը կարող է կնքվել ցանկացած քանակի կրկնօրինակներով: Յուրաքանչյուր կրկնօրինակ բնօրինակ է, և բոլոր կրկնօրինակները միասին կազմում են մեկ և միևնույն փաստաթուղթը:

13.6 Անգլերեն լեզու

(a) Սույն Համաձայնագրի շրջանակում կամ դրա հետ կապված ցանկացած ծանուցում կամ հաղորդագրություն պետք է լինի անգլերեն լեզվով:

(b) Սույն Համաձայնագրի շրջանակում կամ դրա առնչությամբ տրամադրված մյուս բոլոր փաստաթղթերը պետք է կազմված լինեն

(i) անգլերեն լեզվով, կամ

(ii) եթե անգլերեն լեզվով չեն, ապա, Բանկի կողմից պահանջվելու դեպքում, կցվում են դրանց վավերացված անգլերեն թարգմանությունները, և նման պարագայում գերակայում է անգլերեն լեզվով թարգմանությունը:

13.7 Կողմերի փոփոխությունները

Նախաձեռնողը չի կարող սույն Համաձայնագրով իրեն վերապահված իրավունքներից կամ պարտավորություններից որևէ մեկը հանձնել կամ փոխանցել առանց Բանկի կողմից նախապես ստացված գրավոր համաձայնության:

Բանկը չի կարող սույն Համաձայնագրով իրեն վերապահված բոլոր իրավունքները կամ արտոնությունները կամ դրանց մի մասը հանձնել, ինչպես նաև չի կարող սույն Համաձայնագրով իրեն վերապահված իր բոլոր իրավունքները, արտոնությունները և պարտավորությունները կամ դրանց մի մասը փոխանցել (պարտքի նկատմամբ իրավունքի փոխանցման, ենթամասնակցության կամ որևէ այլ ձևով) առանց Նախաձեռնողի կողմից նախապես ստացված գրավոր համաձայնության:

13.8 <u>Դեկլարատիվ դրույթներ, առդիրներ և հավելվածներ</u>

Դեկլարատիվ դրույթները և հետևյալ Առդիրները սույն Համաձայնագրի մասն են կազմում՝

Առդիր Ա՝ Ծրագրի տեխնիկական բնութագիր և հաշվետվություն

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ՝ Կողմերը սույնով ապահովել են սույն Համաձայնագրի կնքումը երեք (3) բնօրինակով՝ անգլերեն լեզվով:

Լյուքսեմբուրգում 2023 թվականի նոյեմբերի 29-ին և

Երևանում 2023 թվականի նոյեմբերի 29-ին:

Ստորագրված		Ստորագրված
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ		**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ**
կողմից և անունից		կողմից և անունից
_____	_____	_____
Լիոնել Ռապել Վարչության տնօրեն	Վիկտոր Դոմինիակ Իրավական խորհրդատու	Տիգրան Ավինյան Երևանի քաղաքապետ

Առդիր Ա

Ծրագրի տեխնիկական բնութագիր և հաշվետվություն

Ա.1. Տեխնիկական նկարագրություն

<u>Նպատակը, գտնվելու վայրը</u>

Գործողությունը շրջանակային փոխառություն է, որն աջակցում է կայուն էներգաարդյունավետության բարելավումներին, որ նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում հանրային շենքերին, մասնավորապես մանկապարտեզներին և պոլիկլինիկաներին:

Մանկապարտեզներն ու պոլիկլինիկաները համարվում են առաջնահերթային շենքեր՝ հաշվի առնելով պահանջարկը և Կառավարության առաջնահերթությունները: Համայնքային ներդրումային ծրագրերով շենքերի ընտրությունն ու առաջնահերթությունը որոշվում է Երևանի քաղաքապետարանի կողմից՝ ելնելով քաղաքի ընդհանուր առաջնահերթություններից:

Քաղաքի առաջնահերթությունների և տեխնիկատնտեսական ուսումնասիրության արդյունքների հիման վրա Երևանի քաղաքապետարանը սահմանել է համապատասխան հասարակական շենքերի շարք՝ կազմված 6 պոլիկլինիկաներից և 32 մանկապարտեզներից մոտ 109,278.30 մ^2 ընդհանուր մակերեսով:

Նկարագրություն

ԵՆԲ վարկը կֆինանսավորի էներգաարդյունավետության իրավասու ներդրումները, այդ թվում՝

- Էներգաարդյունավետության կապիտալ վերանորոգումները՝ ջերմային վերանորոգումը, իսկ ավելի կոնկրետ՝ շենքի արտաքին պատերի վերանորոգումը, այդ թվում, բայց չսահմանափակվելով, տանիքները և նկուղները, դռների և պատուհանների փոխարինումը, օդափոխության արդիականացումը կամ նոր համակարգերը;
- Լուսավորման համակարգի վերանորոգում՝ լուսավորության նոր համակարգեր;
- Ջերմային արտադրության/բաշխման համակարգերի արդիականացում, ներառյալ կաթսաների փոխարինում, արևային ջրատաքացում, արևային ֆոտովոլտայիկ էներգիայի արտադրություն, ջերմային պոմպեր և այլն:
- Տեխնիկական և/կամ հեղինակային վերահսկողություն և նախագծման արժեք:

Էներգաարդյունավետության միջոցառումներից զատ համապարփակ վերանորոգումները նաև կներառեն շենքերի ընդհանուր տեխնիկական վիճակի բարելավման համար անհրաժեշտ աշխատանքները, հատկապես սեյսմիկ անվտանգության ու հաշմանդամություն ունեցող անձանց համար մուտքի ապահովման համար անհրաժեշտ միջոցառումները:

Նախապես ընտրված շենքերի ցանկը ներկայացված է ստորև՝

No	Շինություն	Ընդհանուր մակերես (մ^2)
1	Թիվ 20 պոլիկլինիկա	4,684.00

2	Թիվ 16 պոլիկլինիկա	2,694.00
3	Նորագավիթ պոլիկլինիկա	1,072.00
4	Սարի Թաղ պոլիկլինիկա	916.00
5	Թիվ 59 մանկապարտեզ	5,568.00
6	Թիվ 73 մանկապարտեզ	3,471.00
7	Թիվ 120 մանկապարտեզ	5,025.00
8	Թիվ 4 պոլիկլինիկա	2,418.00
9	"Սուրբ Աստվածամայր" պոլիկլինիկա	2,856.00
10	Թիվ 56 մանկապարտեզ	3,680.00
11	Թիվ 75 մանկապարտեզ	400.00
12	Թիվ 78 մանկապարտեզ	4,607.00
13	Թիվ 83 մանկապարտեզ	4,251.90
14	Թիվ 100 մանկապարտեզ	3,374.50
15	Թիվ 101 մանկապարտեզ	2,103.00
16	Թիվ 102 մանկապարտեզ	2,433.60
17	Թիվ 103 մանկապարտեզ	3,118.80
18	Թիվ 108 մանկապարտեզ	2,203.20
19	Թիվ 129 մանկապարտեզ	768.00
20	Թիվ 157 մանկապարտեզ	3,060.00
21	Թիվ 3 մանկապարտեզ	2,152.00
22	Թիվ 79 մանկապարտեզ	3,902.40
23	Թիվ 46 մանկապարտեզ	3,957.60
24	Թիվ 17 մանկապարտեզ	1,653.00
25	Թիվ 94 մանկապարտեզ	4,456.00
26	Թիվ 84 մանկապարտեզ	4,190.10
27	Թիվ 128 մանկապարտեզ	564.00
28	Թիվ 45 մանկապարտեզ	3,299.70
29	Թիվ 72 մանկապարտեզ	2,892.60
30	Թիվ 142 մանկապարտեզ	992.00
31	Թիվ 39 մանկապարտեզ	3,120.10
32	Թիվ 40 մանկապարտեզ	2,502.10
33	Թիվ 67 մանկապարտեզ	1,020.00
34	Թիվ 117 մանկապարտեզ	2,608.80
35	Թիվ 133 մանկապարտեզ	1,416.00

36	Թիվ 33 մանկապարտեզ	2,881.80
37	Թիվ 93 մանկապարտեզ	4,620.30
38	Թիվ 118 մանկապարտեզ	4,345.80
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	109,278.30

Ցանկը նախնական է և ենթակա է փոփոխման. շրջանակային վարկի իրականացման ընթացքում ցանկում կարող են ներառվել կամ հանվել շինություններ:

Նախաձեռնողը շենքերի վերջնական ցանկը կուղարկի որպես Բանկի հաստատման ներկայացված հատկացման հայտ՝ իրականացման ընթացքում որոշված ձևաչափով և տեղեկատվությամբ:

<u>Ժամանակացույց</u>

Բոլոր ծրագրերի ֆիզիկական իրականացումը և գործարկումը պետք է իրականացվի պայմանագրի ստորագրումից հետո 4 տարվա ընթացքում: Ենթածրագրերի մասով հատկացումների ժամանակահատվածը Ֆինանսական պայմանագրի ստորագրումից հետո 3 տարի է:

ՈԼՈՐՏ՝ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ (ԷԱ)	
ՏԵԽՆՈԼՈԳԻԱ	**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ** **(Միայն ԵՆԲ իրավասու ծրագրերի համար)**
Բոլոր տեխնոլոգիաները / Ընդհանուր շրջանակ	Էներգետիկ վարկավորման քաղաքականությամբ (https://www.eib.org/en/publications/20230164-eib-energy-lending-policy) սահմանված ԷԱ չափանիշներին ու շրջանակին համապատասխան ծրագրեր Որոշ առանձին ծրագրերի համար կարող են ավելացվել լրացուցիչ չափանիշներ՝ գնահատման ընթացքում հայտնաբերված ռիսկերից ելնելով: Այս չափանիշները ենթակա են պարբերական վերանայման՝ տարբեր ենթաոլորտներում և կանոնակարգային փոփոխությունների ընթացքում ձեռքբերված փորձի հիման վրա: Կլիմայի բանկի գործողությունների պլան https://www.eib.org/attachments/strategies/eib_group_climate_bank_roadmap_en.pdf Կլիմայական գործողությունների ուղեցույց 2022թ. Tracking_Climate_Action_and_Environmental_Sustainability_2022_v1.2.pdf (eib.org)
ԵՄ-ից դուրս շինությունների վերանորգման էներգաարդյունավետության չափանիշ	Իրավասություն Շենքի արտաքին պատերի ու շենքային համակարգերի էներգաարադյունավետության բարելավմանն առնչվող բոլոր կապիտալ ծախսերը ընդունելի են, եթե

ՈԼՈՐՏ՝ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ (ԷԱ)	
ՏԵԽՆՈԼՈԳԻԱ	**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ** **(Միայն ԵՆԲ իրավասու ծրագրերի համար)**
	a) Ծրագիրը որդեգրել է էներգետիկ լավագույն չափանիշները համեմատած ելակետայինների, որոնք կսահմանվեն ըստ առանձին դեպքերի Բանկի ծառայությունների կողմից: Օրինակ՝ Միջազգայնորեն ճանաչված սերտիֆիկացված սխեմաները, որտեղ էներգետիկ ելակետային պայմանները սահմանվել են թափանցիկ, պրակտիկ մեթոդների միջոցով (այն է՝ IFC Edge certification, LEED, BREAM և այլն) b) Ակնկալվող էներգախնայողությունները գնահատվում են Բանկի կողմից ընդունելի մեթոդով, ինչպիսիք են սերտիֆիկացման սխեմաները: Շենքերի՝ ավելի ընդլայնված վերանորոգումների դեպքում, ներառյալ և՛ էներգաարդյունավետության, և՛ ոչ էներգաարդյունավետության բարելավումները, երբ կհամարվի, որ բոլոր ներդրումների կատարումը տարբեր փուլերում տնտեսապես վնասակար է, բոլոր կապիտալ ծախսերը (էներգաարդյունավետության և ոչ էներգաարդյունավետության բարելավումներ) կհամարվեն Ծրագրի ներդրումային ծախսերի (ԾՆԾ) մի մաս: Ցուցիչներ • Առաջնային էներգախնայողություններ Մվտժ/տարի: Ակնկալվող էներգախնայողությունը կստացվի ելակետային տվյալների (էներգիայի մակարդակները վերանորոգումից առաջ) հետ համեմատությունից: Տնտեսական գնահատում Ներդրումային վարկերի դեպքում Բանկի տնտեսական գնահատումը հիմնվում է ծախս-օգուտ վերլուծության վրա, որ ներառում է էներգախնայողությունները և ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը [1 մակարդակի օգուտներ], ինչպես նաև այլ տնտեսական օգուտները, ինչպիսիք են օգտակար ծառայության ժամկետի երկարացումը և պահպանման ծախսերի կրճատումը [2 մակարդակի օգուտներ], երբ դրանք չափելի ու քանակական են: Միջնորդավորված գործածման դեպքերում կարող են կիրառվել պարզեցված մեթոդներ, ինչպիսիք են կանխատեսումների հիման վրա (ex-ante) գնահատումները: Հաշվետվություններ և մշտադիտարկում • ստանալ սերտիֆիկացում և ներկայացնել բանկ ելակետային

ՈԼՈՐՏ՝ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ (ԷԱ)	
ՏԵԽՆՈԼՈԳԻԱ	**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ** **(Միայն ԵՆԲ իրավասու ծրագրերի համար)**
	տվյալների հիմնավորումների ու ձեռք բերված էներգիայի մակարդակների/խնայողությունների հետ միասին • որպես շահագործման ընթացքում էներգիայի սպառման մշտադիտարկման լավագույն փորձ, խիստ խորհուրդ է տրվում որպես պարտավորություն ներառել նաև էներգիայի կառավարման համակարգի ներդնումը: ՀԳ-ի /Համապատասխանության գնահատում/ հատուկ նկատառումներ • Վերանորոգումը պետք է ապահովի առնվազն 30% էներգախնայողություն՝ մինչև վերանորոգումը շենքի ելակետային տվյալների հետ համեմատած: Ընդհանուր առմամբ, վերականգնվող էներգիայի աղբյուրների միջոցով առաջնային էներգիայի մաքուր պահանջարկի կրճատումները հաշվի չեն առնվում: Այնուամենայնիվ, ԵՄ-ից դուրս հատուկ դեպքերի պարագայում, որտեղ ՎԷ-ի տարանջատում հնարավոր չէ, եթե կիրառված սերտիֆիկացման սխեմաները չեն կատարում այդպիսի բաժանում, կարող է դիտարկվել վերականգնվող էներգիայի աղբյուրների միջոցով առաջնային էներգիայի մաքուր պահանջարկի կրճատումը: • Շենքերի՝ ավելի ընդլայնված վերանորոգումների դեպքում, ներառելով և՛ էներգաարդյունավետության, և՛ ոչ էներգաարդյունավետության բարելավումները, երբ կհամարվի, որ դրանց բոլորի կատարումը տարբեր փուլերում տնտեսապես վնասակար է, բոլոր ԾՆԾ-ները կդիտարկվեն չափանիշներին համապատասխանող և, հետևապես՝ 100% ՀԳ:
	Հավելված 1: Շենքերում ներդրումների ընդունելի ստանդարտ միջոցառումների ցանկ (Ծանոթագրություն: Այս ցանկը ներառում է տարրեր/համակարգեր, որ կիրառելի են շենքերի ԷԱ վերանորոգման ծրագրերի համար (տե՛ս շենքերի վերանորոգման ԷԱ չափանիշները): ԷԱ ծրագրերը, որ ներառում են այս տարրերը, նույնպես պետք է համապատասխանեն շենքերի վերանորոգման Էներգաարդյուանվետության չափանիշներին. - Ծանոթագրություն: ՀԳ համապատասխանությունը կիրառելի է ստորև բոլոր տարրերի համար– Տաքսոնոմիայի պատվիրակված ակտին համապատասխանումը ներառվում է որպես պայման. Միջոցառումները պետք է համապատասխանեն 2010/31/ԵՄ Դիրեկտիվի իրականացումն ապահովող ազգային գործող միջոցառումներում առանձին բաղադրիչների ու համակարգերի համար սահմանված նվազագույն պայմաններին և դրանք, որտեղ կիրառելի է, գնահատվում են էներգաարդյունավետության երկու դասերով Կանոնակարգ (ԵՄ) 2017/1369-ի և

ՈԼՈՐՏ՝ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ (ԷԱ)	
ՏԵԽՆՈԼՈԳԻԱ	**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ** **(Միայն ԵՆԲ իրավասու ծրագրերի համար)**
	պատվիրակված ակտերի համաձայն: ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐԻ ՀԱՄԱՐ a) Շենքի արտաքին պատերի ջերմամեկուսացում: Բոլոր միջոցառումները՝ մեկուսացումը բարելավելու և Շենքի արտաքին պատերի միջոցով էներգիայի կորուստ կրճատելու համար (այսինքն՝ հերմետիկության ապահովման միջոցառումներ, ջերմային կամուրջի էֆեկտի կրճատման միջոցառումներ և այլն): - Արժեքը կարող է ներառել ամբողջ նյութի, տեղադրման արժեքը, ամբողջ նախագծման/տեխնիկական աջակցության արժեքը (ճարտարագիտական աշխատանքներ, էներգետիկ սիմուլացիաներ, էներգետիկ աուդիտներ, ԷԱՎ պատրաստում և այլն) և աշխատանքների (հին նյութերի հեռացում, փայտամած, մեխանիկական ամրացումներ, սոսնձման, ավարտական աշխատանքներ, ծրագրի կառավարում, շահագործման հանձնում և այլն) ավարտման համար անհրաժեշտ լրացուցիչ ծախսերը: b) առկա պատուհանների ու դրսի դռների փոխարինում նոր էներգաարդյունավետ պատուհաններով ու դռներով. - վերջինս կարող է ներառել նոր պատուհանների ու դռների արժեքը, տեղադրման ծախսերը, նախագծման/տեխնիկական աջակցության արժեքը (ճարտարագիտական աշխատանքներ, էներգետիկ սիմուլացիաներ, էներգետիկ աուդիտներ և այլն) և աշխատանքների (փայտամած, ավարտական աշխատանքներ, ծրագրի կառավարում, շահագործման հանձնում և այլն) ավարտման համար անհրաժեշտ բոլոր լրացուցիչ ծախսերը: c) Շինության կարկասի կամ ճարտարապետական այլ էներգաարդյունավետության միջոցառումներ, որ ազդում են ջերմային արդյունավետության բարելավման վրա և/կամ ապահովում են էներգիայի սպառման կրճատում: Այն կարող է ներառել օրինակ արտաքին արևապաշտպան սարքավորումներ, արևի կառավարման համակարգերի գործառույթներով ֆասադային կամ տանիքի տարրեր, “կանաչ տանիքներ”, պասիվ համակարգեր և այլն կամ այլ միջոցառումներ, որ կրճատում են շինության էներգետիկ պահանջարկը և չեն ընդգրկվում ուրիշ այլ տեղ: - Այն կարող է ներառել բոլոր նյութերի արժեքը, տեղադրման ծախսերը, նախագծման/տեխնիկական աջակցության արժեքը (ճարտարագիտական աշխատանքներ, էներգետիկ սիմուլյացիաներ, էներգետիկ աուդիտներ, ԷԱՎ պատրաստում և այլն) և աշխատանքների (փայտամած, ավարտական

ՈԼՈՐՏ՝ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ (ԷԱ)	
ՏԵԽՆՈԼՈԳԻԱ	**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ** **(Միայն ԵՆԲ իրավասու ծրագրերի համար)**
	աշխատանքներ, ծրագրի կառավարում, շահագործման հանձնում և այլն) ավարտման համար անհրաժեշտ բոլոր լրացուցիչ ծախսերը: ՇԵՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՐ - բոլոր դեպքերի համար այն ներառում է նյութերի արժեքը, տեղադրման ծախսերը, նախագծման/տեխնիկական աջակցության արժեքը (ճարտարագիտական աշխատանքներ, էներգետիկ սիմուլյացիաներ, էներգետիկ աուդիտներ, ԷԱՎ պատրաստում և այլն) և աշխատանքների ավարտման համար անհրաժեշտ բոլոր լրացուցիչ ծախսերը: d) ոչ արդյունավետ կաթսայի կամ վառարանի փոխարինում բարձր արդյունավետությամբ գազի կոնդենսացիոն կաթսայով կամ վերականգնվող էներգիայի աղբյուրներով սնուցվող կաթսաներով: Գազի կաթսաների դեպքում դրանք պետք է ունենան առնվազն A վարկանիշ կամ ունենան 90% կամ ավել սեզոնային արդյունավետություն և լինեն շենքի ԷԱ վերանորոգման ավելի լայն ծրագրի մաս: e) Ջերմային պոմպերի տեղադրում և թարմացում: f) Բոլոր տարրերը (բացառությամբ a, b, c կետերում արդեն իսկ նշվածների), որ կրճատում են ՋՕՕ (Ջեռուցում, օդափոխություն և օդորակում) համակարգերի էներգիայի սպառումը, ինչպես նաև կենցաղային տաք ջրի համակարգը, ներառյալ կենտրոնական ջեռուցման ծառայությանն առնչվող սարքավորումները (հովացման համակարգերը, պահեստավորման բաքերը, օդափոխման միավոր, ջերմափոխանակիչները, ջերմային վերականգնման միավորները/համակարգերը, օդամուղները, խողովակները, փականները, ռադիատորները, առաստաղի/հատակի ակտիվ հեծանները, ֆանկոյլը, արագության փոփոխվող շարժիչները, պոմպերը և այլն, ինչպես նաև բոլոր հարակից կառավարման համակարգերը և էլեկտրաէներգիայի չափման համակարգերը՝ իրական արդյունավետությանը և սպառմանը հետևելու համար): Լուսավորություն. LED լուսավորման աղբյուրներ, լուսատուներ և առնչվող սարքավորումներ (մալուխների անցկացում, տրանսֆորմատորներ, վերահսկման համակարգեր և այլն)— Արդյունավետությունը բարձրացնելու ծրագրեր (շարժման և ցերեկային լույսի վերահսկում) - N–TE CA - g) Շենքի կառավարման համակարգեր (ՇԿՀ) և Էներգիայի կառավարման համակարգեր (ԷԿՀ): Բոլոր սարքավորումները,

ՈԼՈՐՏ՝ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ (ԷԱ)	
ՏԵԽՆՈԼՈԳԻԱ	**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ** **(Միայն ԵՆԲ իրավասու ծրագրերի համար)**
	հաշվիչները, կապի համակարգերը և ծրագրակազմը/ծրագրավորումը, որ անհրաժեշտ են շենքի տեխնիկական համակարգերի վերահսկման և շենքերի էներգիայի սպառման մշտադիտարկման և բարելավման համար: h) Գոտիավորված թերմոստատներ և խելացի թերմոստատների համակարգեր: Սարքավորումներ, կապի համակարգեր և ծրագրավորման/ծրագրային ապահովման հավելվածներ: i) Ապակենտրոնացված էներգամատակարարման համակարգեր՝ հիմնված էներգիայի վերականգնվող աղբյուրների վրա, եթե տեղադրված են տեղում, որպես շենքի ծառայություն՝ - Արևային ֆոտովոլտայիկ համակարգեր և բոլոր օժանդակ տեխնիկական սարքավորումները, ներառյալ միացումը էլեկտրացանցին; - Արևային վահանակներ (տաք ջրի վահանակներ, թափանցիկ կոլեկտորներ, վակումային արևային կոլեկտորներ և այլն) և ամբողջ օժանդակ տեխնիկական սարքավորումը; - ՎԷ կաթսաներ կամ ՎԷ ՋԷՀ համակարգեր (այն է՝ բիոմասսա, բիոգազ և այլն): j) Ջերմային կամ էլեկրաէներգիայի պահեստավորման միավորներ (և բոլոր օժանդակ սարքավորումները): k) Բարձր արդյունավետությամբ միկրո ՋԷՀ (ջերմության և էներգիայի համակցված արտադրություն) գործարանի տեղադրում: l) Էլեկտրական տրանսպորտային միջոցների համար լիցքավորման կայանների տեղադրում:

Ա.2. ԲԱՆԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԵԹՈԴԸ

Ա.2.1. Ներքևում ներկայացվող տեղեկատվությունը պետք է ներկայացվի Բանկին ստորև կոնտակտային անձանց պատասխանատվության ներքո.

	Ֆինանսական հարցերով կոնտակտային տվյալներ	**Տեխնիկական հարցերով կոնտակտային տվյալներ**
Կառույց	*Ֆինանսների նախարարություն*	*Երևանի քաղաքապետարան*
Կոնտակտային անձ	*Պարոն Արգամ Արամյան*	*Պարոն Արմեն Հարությունյան*
Պաշտոն	*Վարչության պետ*	*Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ի տնօրեն*
Գործառույթ/ ֆինանսական և տեխնիկական վարչություն	*Միջազգային համագործակցության վարչություն*	*Ծրագրերի իրականացման գրասենյակ*
Հասցե	*Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք-Ադամյան 1*	*Երևան 0010, Բուզանդի 1/3*
Հեռախոսահամար	*+374 11 800 333*	*+37410563601*
Էլ-փոստ	*icd@minfin.am*	*building@yerevan.am*

Վերոնշյալ կոնտակտային անձը/անձինք հանդիսանում է/են ներկայումս պատասխանատու անձը/անձինք:
Ցանկացած փոփոխության դեպքում Վարկառուն պետք է անհապաղ տեղեկացնի ԵՆԲ-ին:

1. Կոնկրետ թեմաների վերաբերյալ տեղեկատվություն

Վարկառուն Բանկին կտրամադրի հետևյալ տեղեկատվությունը ամենաուշը մինչև ստորև նշված վերջնաժամկետը.

Փաստաթուղթ / տեղեկատվություն	**Վերջնաժամկետ**
Վերանորոգման ենթակա շենքերի և էներգաարդյունավետության իրականացվելիք միջոցառումների մանրամասն ցանկ	Հատկացման հայտի հետ
Թարմացված գնումների պլան	Տարեկան հաշվետվության հետ
Էներգետիկ աուդիտ յուրաքանչյուր վերանորոգված շենքի համար	Տարեկան հաշվետվության հետ
Էներգաարդյունավետության վկայագիր յուրաքանչյուր վերանորոգված շենքի համար	Վերանորոգված շենքը շահագործման հանձնելուց 3 ամիս հետո

Վերանորոգված շենքերի ստուգման հաշվետվություններ	Վերանորոգված շենքը շահագործման հանձնելուց 2 ամիս հետո

<u>Ա.2.2. Ծրագրի իրականացման վերաբերյալ տեղեկատվություն</u>

Վարկառուն պետք է Բանկին տրամադրի ծրագրի առաջընթացի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը ծրագրի իրականացման ընթացքում առնվազն մինչև ստորև նշված վերջնաժամկետները:

Փաստաթուղթ / տեղեկատվություն	**Վերջնաժամկետ**	**Հաշվետվությունների ներկայացման հաճախականություն**
Ծրագրի առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն - *Տեխնիկական նկարագրության հակիրճ թարմացում՝ բացատրելով էական փոփոխությունների պատճառները նախնական շրջանակի հետ համեմատած;* - *Ծրագրի հիմնական բաղադրիչներից յուրաքանչյուրի ավարտման ամսաթվի թարմացում՝ բացատրելով ցանկացած հնարավոր ուշացման պատճառները;* - *Ծրագրի արժեքի թարմացում՝ բացատրելով բյուջեով նախնականորեն նախատեսված արժեքի համեմատ արժեքի ցանկացած հնարավոր փոփոխության պատճառները;* - *Ցանկացած կարևոր խնդրի նկարագրություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությամբ և/կամ սոցիալական ազդեցությամբ;* - *Գնումների պլանի թարմացում;* - *Ծրագրի պահանջի կամ օգտագործման ու դիտողությունների թարմացում;* - *Ցանկացած կարևոր խնդիր, որ ծագել է և ցանկացած կարևոր վտանգ, որ կարող է ազդել ծրագրի գործարկման վրա;* - *Ծրագրի հետ կապված ցանկացած իրավական գործողություն, որը կարող է ընթացքում լինել;* - *Ծրագրին առնչվող ոչ գաղտնի նկարներ, առկայության դեպքում:*	*Հունիսի վերջ և դեկտեմբերի վերջ*	*Կիսամյակային*

2. <u>Աշխատանքների ավարտի ու շահագործման առաջին տարվա վերաբերյալ տեղեկատվություն</u>

Վարկառուն պետք է Բանկին տրամադրի ծրագրի ավարտման ու նախնական գործարկման վերաբերյալ տեղեկատվություն առնվազն մինչև ստորև նշված վերջնաժամկետը:

Փաստաթուղթ / տեղեկատվություն	**Բանկին տրամադրման ամսաթիվ**
Ծրագրի ավարտական հաշվետվություն, ներառյալ՝ - *Ավարտված ծրագրի վերջնական Տեխնիկական նկարագրություն, որում բացատրվում են Ա.1.-ում ներկայացված Տեխնիկական նկարագրության համեմատ էական փոփոխությունների պատճառները;* - *Ծրագրի հիմնական բաղադրիչներից յուրաքանչյուրի ավարտի ամսաթիվը՝ ցանկացած հնարավոր ուշացման պատճառների բացատրությամբ;* - *Ծրագրի վերջնական արժեքը՝ բացատրելով բյուջեով նախնականորեն նախատեսված արժեքի համեմատ արժեքի ցանկացած հնարավոր փոփոխության պատճառները;* - *Ծրագրի ազդեցությունն աշխատանքային զբաղվածության վրա՝ իրականացման ընթացքում անհրաժեշտ մարդ-օր, ինչպես նաև ստեղծված մշտական նոր աշխատատեղերը;* - *Ցանկացած կարևոր խնդրի նկարագրություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությամբ և/կամ սոցիալական ազդեցությամբ;* - *Գնումների ընթացակարգերի թարմացում և գնումների պլանից շեղումների բացատրություն;* - *Ծրագրի պահանջի կամ օգտագործման ու դիտողությունների թարմացում;* - *Ցանկացած կարևոր խնդիր, որ ծագել է և ցանկացած կարևոր վտանգ, որ կարող է ազդել ծրագրի գործարկման վրա;* - *Ծրագրի հետ կապված ցանկացած իրավական գործողություն, որը կարող է ընթացքում լինել;* - *Ծրագրին առնչվող ոչ գաղտնի նկարներ, առկայության դեպքում:* - *Մշտադիտարկման հետևյալ ցուցիչների թարմացում՝* • *Էներգախնայողություններ Մվտժ/տարի և կՎտժ/մ²/տարի* • *վերանորոգված շենքերի քանակ* • *Ընդամենը վերանորոգված համախառն ու մաքուր մակերես մ²*	*Ծրագրի ավարտման օրվանից հետո 15 ամսվա ընթացքում*

Սույն ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է ԵՄ-ի կողմից Բանկին տրամադրված երաշխիքով Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի խորհրդի No.466/2014/EU Որոշման շրջանակներում: Սույն Որոշման Հոդված 9(2)-ի համաձայն՝ Բանկը "պետք է պահանջի ծրագրի նախաձեռնողներից իրականացնել մանրակրկիտ մշտադիտարկում ծրագրի իրականացման ընթացքում մինչև ավարտը, ի թիվս այլոց, ներդրումային ծրագրի՝ տնտեսական, զարգացման, սոցիալական, բնապահպանական և մարդու իրավունքների ազդեցությունների վերաբերյալ: ԵՆԲ-ը պետք է պարբերաբար ստուգի ծրագրի նախաձեռնողների կողմից տրամադրված տեղեկատվությունը և ապահովի դրա հանրային հասանելիությունը, եթե ծրագրի նախաձեռնողը համաձայն է: Ըստ հնարավորության, ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող գործառնություններին առնչվող ծրագրի ավարտական հաշվետվությունը պետք է հրապարակվի՝ բացառելով գաղտնի տեղեկատվությունը":

Համապատասխանաբար, և չխախտելով Բանկի՝ Օրհուսի [ԵՄ-ի հաստատման ենթակա Կոնվենցիա/Կանոնակարգ] շրջանակում ծրագրին առնչվող ցանկացած բնապահպանական տեղեկատվություն հանրայնացնելու պարտավորությունը՝ Բանկը պետք է հանրայնորեն հասանելի դարձնի Ծրագրի առաջընթացի հաշվետվություններով և Ծրագրի ավարտական հաշվետվությամբ Վարկառուի կողմից տրամադրված ամբողջ տեղեկատվությունը՝ պայմանով, որ նման տեղեկատվությունը Վարկառուի կողմից հստակ նշվի "ԵՆԲ կայքում հրապարակման համար":

Որպես այլընտրանք, Վարկառուն կարող է նաև որոշել այդ տեղեկատվությունը հրապարակել իր պաշտոնական կայքում և ԵՆԲ-ին տրամադրել համապատասխան հղումը (URL), որ կօգտագործվի որպես աղբյուր ԵՆԲ-ի հրապարակման համար:

ԵՆԲ-ն պատասխանատվություն չի կրի իր կայքում հանրայնացված նման տեղեկատվության բովանդակության համար: "ԵՆԲ կայքում հրապարակման համար" նշագրումով փաստաթղթերը կհրապարակվեն ինչպես ստացվել են և ԵՆԲ-ի կողմից չեն խմբագրվի: ԵՆԲ-ի կողմից կհրապարակվեն ծրագրին առնչվող համապատասխան տեղեկատվությանը հղում անող գործող հղումները (URL) միայն:

3. <u>Ծրագրի ավարտական հաշվետվությունից 3 տարի հետո պահանջվող տեղեկատվություն (ԵՄ-ից դուրս միայն):</u>

Վարկառուն ծրագրի ավարտական հաշվետվությունից 3 տարի հետո պետք է Բանկին տրամադրի հետևյալ տեղեկատվությունն առնվազն մինչև ստորև նշված վերջնաժամկետը:

Փաստաթուղթ / տեղեկատվություն	**Բանկին ներկայացնելու ամսաթիվ**
Վերոնշյալ աղյուսակում թվարկված Մշտադիտարկման ցուցիչների թարմացում • *Էներգախնայողություններ ՄՎտժ/տարի և կՎտժ/մ²/տարի* • *Վերանորոգված շենքերի քանակ* • *Ընդհանուր վերանորոգված համախառն և մաքուր մակերես մ²*	

Հաշվետվությունների կազմման լեզու	*Անգլերեն*